

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 106-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3
2. Ամփոփողի.	5
3. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ.	7
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ.	17
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր.	19
6. Եզրակացություններ.	22
7. Առաջարկություններ.	24

Ի ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 19-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում ՀՀ ՏԿԵ նախարարի 18.02.2020 թվականի N206-Ա հրաման ՀՀ կառավարության 06.07.2020 թվականի N858-Ա որոշում ՀՀ կառավարության 20.08.2020 թվականի N1160-Ա որոշում ՀՀ կառավարության 02.12.2020 թվականի N 1783-Ա որոշում ՀՀ կառավարության 25.12.2020 թվականի N 2053-Ա որոշում ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշում ՀՀ կառավարության 22.12.2020 թվականի N 2127-Ն որոշում ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի N 1937-Ն որոշում ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանումը

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյանը:

II ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 32,626,196.08 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 21,605,118.36 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 19,684,042.57 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 21,056,849.83 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 64.5%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 48 միջոցառում (առանց վարկային միջոցների), որից չի իրականացվել «31010 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգման» միջոցառումը:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու համար ընտրվել է ստորև բերված աղյուսակում ներկայացված հետևյալ թվով 4 միջոցառում 15,645,222.0 հազ. դրամ (դրամարկղային ծախս) ընդհանուր գումարով:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննությամբ ընդգրկվել են հետևյալ էական փաստերը՝

1. «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման մասով ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշմամբ ԶՕԸ-երի ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով հատկացվել է 8,114,468.9 հազ. դրամի չափով պետական աջակցության գումար, որը հաշվարկվել է նախնական տվյալների հիման վրա: Սակայն ԶՕԸ-երի կողմից հաստատված ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն հաշվարկված ֆինանսական ճեղքվածքի գումարը կազմել է 7,471,725.0 հազ. դրամ, կամ 642,743.9 հազ. դրամով պակաս գումար: Ելնելով ընդունված 22.1%-ի չափով ճեղքվածքի մարման հաշվարկից՝ ֆինանսական աջակցության իրական չափը գերազանցվել է 142,046.4 հազ. դրամով:

2. «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» և «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառումների համար 2020 թվականին թվով 15 ԶՕԸ-երին հատկացվել է 7,451,816.50 հազ. դրամ, սակայն ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվել են 2,856,008.00 հազ. դրամի ծախսեր, կամ նախատեսված գումարը գերազանցվել է 4,595,808.50 հազ. դրամի չափով:

3. Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման պահանջի՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից ՋՕԸ-երի հետ կնքվող ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերում պարտադիր պետք է ներառել դրույթներ արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, ինչպես նաև պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ, սակայն շարունակաբար վերոնշյալ պահանջները չեն կատարվել:

4. ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Ռազմավարության 11-րդ բաժնում սահմանվել է ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման հիմնական տեխնիկաֆինանսական ցուցանիշների շրջանակը, որոնք 2020 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, ունեցել են վատթարացման միտում, մասնավորապես, մատակարարված ջրի քանակի, դրա դիմաց վճարների հավաքագրման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ծախսված էլեկտրական էներգիայի և այլ հիմնական ցուցանիշների գծով:

Լ. Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

30.04.2021թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

III ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 32,626,196.08 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 21,605,118.36 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 19,684,042.57 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 21,056,849.83 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 64.5%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեում 2020 թվականին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 48 միջոցառում (առանց վարկային միջոցների), որից չի իրականացվել մեկը՝ «31010 Զրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգման» միջոցառումը:

ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու համար, որպես հաշվեքննության նշանակալի հոդվածներ, ընտրվել է ստորև բերված աղյուսակում ներկայացված հետևյալ թվով 4 միջոցառումները 15,645,222.0 հազ. դրամ (դրամարկղային ծախս) ընդհանուր գումարով:

Աղյուսակ 1

2020 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությամբ
ընդգրկված միջոցառումների վերաբերյալ

				հազ. դրամ	
Հ/Հ	Ծրագիրը, միջոցառումը		Հոդվածը		Փաստը
1	1004-11002	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	452100	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	2,856,008.0
2	1004-12001	Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը	452100	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	4,595,808.6
3	1004-31001	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	3,568,764.4

		ջրամբարի կառուցում			
4	1004-31005	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	4,624,641.0
ԸՆԴԱՄԵՆԸ					15,645,222.0

ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 170-Ն որոշմամբ 30.12.2019 թվականին դադարեցվել է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը: Դրանով պայմանավորված՝ կնքված և դեռևս գործողության մեջ գտնվող՝ Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսված գործառույթները շարունակել է իրականացվել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏՀ Հիմնադրամ) կողմից:

ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառումների շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՀՏՀ Հիմնադրամի միջև ստորագրված համաձայնագրերով նախատեսված գործառույթները կիրականացվեն ՀՏՀ Հիմնադրամի կողմից:

1004 «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր

**11002 «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին
ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման կատարման
վերաբերյալ**

ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշմամբ ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեին «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 2,856,008.0 հազ. դրամի սուբսիդիա:

Տվյալ միջոցառման շրջանակում «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 452100 հոդվածով 2020 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 2,856,008.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 2,856,008.0 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 100.0%-ով:

Զրոգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ԶՕԸ) կողմից 2020 թվականի համար ներկայացված ֆինանսական հոսքերի հիման վրա ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի կողմից ներկայացվել է 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակների հատկացման նախագիծ, որի հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020 թվականի թիվ 206-Ա հրամանով հաստատվել են 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակներն՝ ըստ առանձին ԶՕԸ-երի, իսկ 06.07.2020 թվականի թիվ 858-Ա, 20.08.2020 թվականի թիվ 1160-Ա, 02.12.2020 թվականի թիվ 1783-Ա և 25.12.2020 թվականի թիվ 2053-Ա հրամաններով չափաքանակները փոփոխվել են՝ ընդամենը 2,856,008.0 հազ. դրամ գումարի սահմաններում: Ըստ ԶՕԸ-երի սուբսիդիայի գումարների բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

11002 միջոցառման շրջանակում 2020 թվականին ԶՕԸ-երին նախատեսված և տրամադրված սուբսիդիայի գումարների վերաբերյալ

Աղյուսակ 2
հազ. դրամ

h/h	ԶՕԸ-ի անվանումը	ՀՀ ՏԿԵՆ նախարարի 18.02.2020թ. N 206-Ա հրամանով հատկացում	ՀՀ կառավարության 06.07.2020թ. N858-Ա, 20.08.2020թ., N1160-Ա, 02.12.2020թ. N 1783-Ա և 25.12.2020թ. N 2053-Ա որոշումներով փոփոխություններից հետո նախատեսված գումար	Ընդամենը տարեկան հատկացում
1	«Երևան» ԶՕԸ	88,592.2	88,592.2	88,592.2
2	«Արտաշատ» ԶՕԸ	328,105.0	381,194.6	381,194.7
3	«Արարատ» ԶՕԸ	311,472.1	257,583.0	257,583.0
4	«Արմավիր» ԶՕԸ	467,728.7	455,327.3	455,327.3
5	«Էջմիածին» ԶՕԸ	498,004.3	437,516.2	437,516.2
6	«Շենիկ» ԶՕԸ	83,912.6	103,912.6	103,912.6
7	«Արագածոտն» ԶՕԸ	58,361.0	68,361.0	68,361.0
8	«Թալին» ԶՕԸ	257,770.6	277,874.0	277,874.0
9	«Կոտայք» ԶՕԸ	150,219.0	158,052.0	158,052.0
10	«Գեղարքունիք» ԶՕԸ	172,064.2	122,791.4	122,791.4
11	«Շիրակ» ԶՕԸ	79,588.1	71,755.2	71,755.2
12	«Տավուշ» ԶՕԸ	145,528.1	175,600.3	175,600.4
13	«Լոռի» ԶՕԸ	46,099.4	77,818.6	77,818.6
14	«Եղեգնաձոր» ԶՕԸ	39,544.3	51,903.3	51,903.3
15	«Սյունիք» ԶՕԸ	129,018.4	127,726.3	127,726.3
	ԸՆԴԱՄԵՆԸ	2,856,008.0	2,856,008.0	2,856,008.0

ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի և 15 ԶՕԸ-երի միջև 11002 միջոցառման մասով 2020 թվականի ընթացքում կնքվել են պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման թվով 134 պայմանագրեր, ընդամենը՝ 2,856,008.0 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ 1-ին եռամսյակում 17 պայմանագիր 462,680.9 հազ. դրամ, 2-րդ եռամսյակում՝ 67 պայմանագիր 1,375,731.6 հազ. դրամ, 3-րդ եռամսյակում՝ 39 պայմանագիր 812,289.1 հազ. դրամ և 4-րդ եռամսյակում՝ 11 պայմանագիր 205,306.41 հազ. դրամ գումարներով:

ԶՕԸ-երի կողմից 4-րդ եռամսյակի ավարտից հետո ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտե են ներկայացվել հաշվետվություններ 2020 թվականի ընթացքում հատկացված սուբսիդիաների գումարների օգտագործման վերաբերյալ՝ ըստ ծախսային ուղղությունների:

2020 թվականին տրամադրված սուբսիդիաների գումարներից գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման համար ԶՕԸ-երին հատկացվել է 705,663.0 հազ. դրամ, որից նյութաձախսը կազմել է 106,385.07 հազ. դրամ, իսկ կատարված շինվերանորոգման աշխատանքները՝ 124,092.06 հազ. դրամ և այլ ծախսեր (աշխատավարձ, վառելիք, հարկային պարտավորություններ և ավտոպահեստամասեր):

1004 «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր

12001 «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման կատարման վերաբերյալ

«12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար 2020 թվականի պետական բյուջեի ճշտված պլանը, ֆինանսավորումը, փաստացի ծախսը և փաստը (դրամարկղային ծախս) կազմել են 4,595,808.60 հազարական դրամ:

ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշմամբ ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեին տվյալ միջոցառման համար նախատեսվել է հատկացնել 4,595,808.60 հազ. դրամ գումարով սուբսիդիա: Նշված գումարից ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշմամբ 1,795,808.6 հազ. դրամը որպես ֆինանսական աջակցություն նախատեսվել է հատկացնել թվով 15 ԶՕԸ-երին, իսկ ՀՀ կառավարության 22.12.2020 թվականի թիվ 2127-Ն որոշմամբ 2,023,596.0 հազ. դրամը՝ ԶՕԸ-երի փոխարեն և նրանց անունից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին վճարելու և 776,404.0 հազ. դրամը՝ թվով 14 ԶՕԸ-երի կրեդիտորական պարտքերը մարելու նպատակով:

Աղյուսակ 3

12001 միջոցառման համար սուբսիդիայի հատկացման չափաքանակների վերաբերյալ

հազ. դրամ

Հ/Հ	ԶՕԸ-երի անվանումը	Չափաքանակները				Ընդամենը
		ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1144-Լ որոշմամբ		ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 2127 - Ն որոշմամբ		
		2020 թ. ԶՕԸ-երի ֆինանսական ճեղքվածքը	ՀՀ պետական բյուջեից աջակցություն ոռոգման համակարգի	էլեկտրոգիայի դիմաց վճարվող գումարներ	կրեդիտորա կան պարտավոր ույթյունները մարելու	

			առողջացմանը		համար	
1	«Երևան» ԶՕԸ	251,707.40	55,705.20	41,616.00	52,000.00	149,321.20
2	«Արտաշատ» ԶՕԸ	960,621.50	212,594.60	281,917.00	90,000.00	584,511.60
3	«Արարատ» ԶՕԸ	884,952.10	195,848.30	261,862.00	0.0	457,710.30
4	«Արմավիր» ԶՕԸ	1,357,319.40	300,387.60	402,972.00	135,000.00	838,359.60
5	«Էջմիածին» ԶՕԸ	1,443,338.00	319,424.30	356,679.00	200,000.00	876,103.30
6	«Շենիկ» ԶՕԸ	210,000.00	46,475.00	62,930.00	20,000.00	129,405.00
7	«Արագածոտն» ԶՕԸ	137,403.00	30,408.60	37,901.00	77,000.00	145,309.60
8	«Թալին» ԶՕԸ	732,376.00	162,081.70	161,512.00	50,000.00	373,593.70
9	«Կոտայք» ԶՕԸ	426,801.20	94,455.10	82,279.00	30,000.00	206,734.10
10	«Գեղարքունիք» ԶՕԸ	488,867.60	108,191.00	143,654.00	20,000.00	271,845.00
11	«Շիրակ» ԶՕԸ	226,125.10	50,043.60	17,786.00	31,000.00	98,829.60
12	«Տավուշ» ԶՕԸ	413,473.50	91,505.60	84,773.00	45,000.00	221,278.60
13	«Լոռի» ԶՕԸ	130,977.10	28,986.50	27,812.00	10,000.00	66,798.50
14	«Եղեգնաձոր» ԶՕԸ	83,941.00	18,576.90	20,586.00	8,500.00	47,662.90
15	«Սյունիք» ԶՕԸ	366,566.00	81,124.50	39,317.00	7,904.00	128,345.50
ԸՆԴԱՄԵՆԸ		8,114,468.90	1,795,808.50	2,023,596.0	776,404.00	4,595,808.50

*ՀՀ պետական բյուջեից «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացման» միջոցառման գծով չափաքանակները հաշվարկվել են յուրաքանչյուր ԶՕԸ-ի ֆինանսական ճեղքվածքի $\approx 22.1\%$ -ի չափով՝ պահպանելով հավասարության սկզբունքը:

2020 թվականի ընթացքում ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի և 15 ԶՕԸ-երի միջև 12001 միջոցառման մասով կնքվել են պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման թվով 45 պայմանագրեր, ընդամենը՝ 2,572,212.5 հազ. դրամ գումարով, ինչպես նաև մեկ պայմանագիր ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի ու «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև՝ 2,023,596.0 հազ. դրամ գումարով:

Այսպիսով՝ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» և «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառումների համար հատկացվել են ընդամենը 7,451,816.50 հազ. դրամ

սուբսիդիայի գումարներ:

Աղյուսակ 4

11002 և 12001 միջոցառումների համար հատկացված սուբսիդիաների
գումարների վերաբերյալ

հազ. դրամ

Հ/Հ	ՋՕԸ-երի անվանումը	1004-11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	1004-12001 Աջակցություն ն ոռոգման համակարգի առողջացման ը	Ընդամենը
1	«Երևան» ՋՕԸ	88,592.20	149,321.20	237,913.40
2	«Արտաշատ» ՋՕԸ	381,194.64	584,511.60	965,706.24
3	«Արարատ» ՋՕԸ	257,583.01	457,710.30	715,293.31
4	«Արմավիր» ՋՕԸ	455,327.29	838,359.60	1,293,686.89
5	«Էջմիածին» ՋՕԸ	437,516.25	876,103.30	1,313,619.55
6	«Շենիկ» ՋՕԸ	103,912.60	129,405.00	233,317.60
7	«Արագածոտն» ՋՕԸ	68,361.00	145,309.60	213,670.60
8	«Թալին» ՋՕԸ	277,873.99	373,593.70	651,467.69
9	«Կոտայք» ՋՕԸ	158,051.93	206,734.10	364,786.03
10	«Գեղարքունիք» ՋՕԸ	122,791.41	271,845.00	394,636.41
11	«Շիրակ» ՋՕԸ	71,755.17	98,829.60	170,584.77
12	«Տավուշ» ՋՕԸ	175,600.34	221,278.60	396,878.94
13	«Լոռի» ՋՕԸ	77,818.58	66,798.50	144,617.08
14	«Եղեգնաձոր» ՋՕԸ	51,903.30	47,662.90	99,566.20
15	«Սյունիք» ՋՕԸ	127,726.30	128,345.50	256,071.80
	ԸՆԴԱՄԵՆԸ	2,856,008.00	4,595,808.50	7,451,816.50

Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարության վերաբերյալ

ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) 11-րդ բաժնում սահմանվել է ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության հիմնական

տեխնիկաֆինանսական ցուցանիշների շրջանակը, որը ներկայացվում է ստորև աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

2019-2020 թվականներին Ռազմավարությամբ սահմանված հիմանկան տեխնիկաֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ

Ցուցանիշները	Ռազմավարությամբ 2019թ. համար սահմանված	2019թ. փաստացի կատարված	Ռազմավարությամբ 2020թ. համար սահմանված	2020թ. փաստացի կատարված
Ոռոգելի հողատարածք, հազ.հա	136.3	82.8	136.9	85.4
ԶՕԸ-երի ջրառ, մլն.լամ	963.4	1,018.6	969.2	1,040.4
Զրտուքը դաշտում, մլն.լամ	543.1	547.7	546.7	558.2
Էլեկտրաէներգիայի սպառում, մլն.կվտժ	98.6	119.9	93.7	115.9
Ոռոգման ջրի վճար դրամ/լամ	11.5	11.0	12.0	11.0
ԶՕԸ-երի եկամուտները (հավաքագրում և անդամավճար), մլն.դրամ	5,639.8	4,000.4	5,956.8	3,740.3
ԶՕԸ-երի ծախսեր, մլն.դրամ	9,403.2	12,877.0	8,933.1	12,848.0
Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության (դրամաշնորհի) չափերի գնահատական, մլն.դրամ	3,763.4	14,766.96	2,976.3	7,451.8
ԶՕԸ-րի պետական ընթացիկ ֆինանսական աջակցությունը մեկ հեկտարի հաշվով, դրամ/հա	27.6	178.3	21.7	87.3

ԾՐԱԳԻՐ՝ 1004 «Ոռոգման համակարգի առողջացում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»

«31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման տարեկան ճշտված պլանը կազմել է 6,001,073.1 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 596,396.23 հազ. դրամ, փաստացի ծախսը 3,569,186.13 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 4,624,641.01 հազ. դրամ:

«11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման տարեկան ճշտված պլանը կազմել է 355,787.2 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 3,260,148.85 հազ. դրամ, փաստացի ծախսը 250,618.13 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 250,618.13 հազ. դրամ:

Ընդամենը՝ 31005 և 11005 միջոցառումների տարեկան ճշտված պլանը կազմել է 6,356,860.3 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 3,856,545.08 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,819,804.26 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 4,875,259.14 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսի և ֆինանսավորման տարբերությունը կազմել է 1,018,714.06 հազ. դրամ, որի վճարումը կատարվել է 2019 թվականին ծրագրի շրջանակում ստացված՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏՀ Հիմնադրամ) վարկային միջոցների մնացորդ գումարներից: Փաստացի ծախսը՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 60.0%:

ԾՐԱԳԻՐ՝ 1004 «Ոռոգման համակարգի առողջացում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում»

«31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման տարեկան ճշտված պլանը կազմել է 4,228,180.3 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 720,162.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,487,888.55 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 3,568,764.38 հազ. դրամ:

11006 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման տարեկան ճշտված պլանը կազմել է 350,618.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 4,803,382.19 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 344,971.62 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 298,810.4 հազ. դրամ:

Ընդամենը 31001 և 11006 միջոցառումների տարեկան ճշտված պլանը կազմել է 4,578,799.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 5,523,544.79 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,832,860.17 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 3,867,574.78 հազ. դրամ:

Ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 1,655,970.01 հազ. դրամ, որը ՀՏՀ Հիմնադրամի վարկային միջոցների հաշվի չօգտագործված մնացորդ գումարն է: Փաստացի ծախսը՝ տարեկան ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 105.0%:

ՀՏԶ Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ Ջրային կոմիտեին ներկայացվել են վերոնշյալ միջոցառումների վերաբերյալ հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2020-31.12.2020 թվականի ժամանակահատվածի համար վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվությունների (համաֆինանսավորման և վարկային միջոցների մասով) ցուցանիշների հանրագումարներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվության տվյալներին:

IV ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշմամբ ամրագրված և ԶՕԸ-երի կողմից հաստատված ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն հաշվարկված ֆինանսական ճեղքվածքի գումարների միջև: Իրականում, «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշմամբ ամրագրված 8,114,468.9 հազ. դրամի չափը որոշվել է նախնական տվյալների հիման վրա, իսկ ԶՕԸ-երի կողմից հաստատված ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն այն կազմել է 7,471,725.0 հազ. դրամ, կամ 642,743.9 հազ. դրամով պակաս գումար: Արդյունքում՝ հիմք ընդունելով 22.1%-ի չափով ճեղքվածքի մարման հաշվարկը, տվյալ ֆինանսական աջակցության չափը 142,046.4 հազ. դրամով գերազանցել է հաստատված ճեղքվածքի մեծության նշված տոկոսից գոյացած գումարը:

2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ ֆինանսական աջակցության չափաքանակների միջև: «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2020 թվականին նախատեսվել են 2,856,008.00 հազ. դրամի ծախսեր, սակայն թվով 15 ԶՕԸ-երին հատկացվել է 7,451,816.50 հազ. դրամի չափով գումար, կամ նախատեսված գումարը գերազանցվել է 4,595,808.50 հազ. դրամով:

3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն և ՀՀ կառավարության 22.12.2020 թվականի թիվ 2127-Ն որոշումների միջև: Ըստ թիվ 1919-Ն որոշման հավելված 3-ի՝ 2,800,000.0 հազ. դրամ սուբսիդիան նախատեսվել է 1004 ծրագրի 12001 «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար, իսկ թիվ 2127-Ն որոշման 6-րդ հավելվածում նույն գումարի վերաբերյալ հղում է կատարվել 11002 «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման բյուջետային ծրագրին:

4. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման հետ: «Թալին» ԶՕԸ-ի կողմից ձեռք են բերվել 8,900.0 հազ. դրամ արժեքով կապիտալ ակտիվներ (S-150 տրակտոր և

առվահան կցորդիչ), որով չեն պահպանվել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման հավելվածի Ընդհանուր դրույթներ գլխի 3-րդ կետի պահանջն՝ ըստ որի սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռք բերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը, ինչպես նաև 6-րդ կետի պահանջն՝ ըստ որի սուբսիդիայի հաշվարկման հիմքում դրված ծախսերի կազմը սահմանում են համապատասխան ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող պետական կառավարման մարմինները՝ համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

5. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման պահանջի և ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից ԶՕԸ-երի հետ 2020 թվականին կնքված՝ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերի միջև: Համաձայն վերոնշյալ որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետի՝ սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրում պարտադիր պետք է ներառել դրույթներ արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, ինչպես նաև պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները: ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև 12001 միջոցառման շրջանակում 2020 թվականին կնքված՝ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերում նշված դրույթները չեն ներառվել:

6. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և գործադիր մարմնի մասին» թիվ 1678-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի հետ՝ ըստ որի ԶՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհուրդը պետք է քննարկի ԶՕԸ-ին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակն ու դրանց օգտագործման արդյունավետությունը: 2020 թվականին ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի կողմից չի ապահովվել ԶՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհրդին վերապահված վերոնշյալ գործառույթի իրականացումը:

Վ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման մասով հաշվետու ժամանակաշրջանում ստացված սուբսիդիաների և գումարների ծախսման ուղղությունների վերաբերյալ 15 ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվություն-տեղեկանքների համաձայն՝ փաստացի ծախսերը կազմել են 2,877,058.9 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը գերազանցել է նախատեսված ցուցանիշը 21,050.9 հազ. դրամով, որը կազմել է 2019 թվականին «Շիրակ» ՋՕԸ-ին տրամադրված սուբսիդիայի ազատ մնացորդի գումարը:

2. ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Ռազմավարության 11-րդ բաժնում սահմանվել է ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման հիմնական տեխնիկաֆինանսական ցուցանիշների շրջանակը, որոնց 2019-2020 թվականների կատարման վերաբերյալ համեմատական վերլուծությունից պարզվել է, որ Ռազմավարությամբ սահմանված չափաքանակները չեն պահպանվել և դրանց նկատմամբ 2020 թվականին արձանագրվել են հետևյալ շեղումները՝

- 2020 թվականին ոռոգվել է նախատեսվածից 51.5 հազ. հեկտարով պակաս հողատարածք,
- ջրառը կատարվել է նախատեսվածից 71.2 մլն. խմ-ով ավելի չափով,
- էլեկտրական էներգիայի սպառումը նախատեսվածի համեմատ գերազանցվել է 22.2 մլն. կվտ.ժ-ով,
- ՋՕԸ-երի եկամուտները (հավաքագրումը և անդամավճարները) նախատեսվածից պակաս են 2,216.5 մլն. դրամով,
- ոռոգելի հողատարածքները 37.6%-ով նախատեսվածից պակաս լինելու պարագայում ծախսերը նախատեսվածից ավելի են 3,914.9 մլն դրամով,
- պետական ընթացիկ ֆինանսական աջակցության չափը նախատեսվածից ավելի է 4,475.5 մլն դրամով, կամ շուրջ երեք անգամ, իսկ մեկ հեկտար ոռոգելի հողերի հաշվով՝ չորս անգամ:

3. 2019 թվականի համեմատ՝ 2020 թվականին 117,871.2 հազ. դրամով նվազել է մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման ցուցանիշն՝ ավելի հասույթի պարագայում հավաքագրվել է 3,740,320.1 հազ. դրամ (կամ հասույթի 60.9%)՝ 2019 թվականի 4,047,743.9 հազ. դրամի (67.2%) դիմաց: Ընդ որում, 2019 թվականին 100.0% հավաքագրում ապահովել են թվով 6 ՋՕԸ-եր, իսկ հաշվետու տարում՝ միայն մեկը: Միաժամանակ, նախորդ տարվա համեմատ 425,295.0 հազ. դրամով ավելացել են դեբիտորական պարտքերը՝ 2020 թվականին կազմելով 2,404,653.5 հազ. դրամ:

4. 12001 միջոցառման շրջանակում «Տավուշ» ՋՕԸ-ին 22.12.2020 թվականի թիվ 174 սուբսիդիայի պայմանագրով տրամադրվել է 45,000.0 հազ. դրամ, որից 6,934.8

հազ. դրամը աշխատավարձի, 23,065.2 հազ. դրամը հարկային պարտավորությունների, 15,000.0 հազ. դրամը շահագործման ծախսերի մասով առաջացած պարտքերի մարման համար: Սակայն «Տավուշ» ԶՕԸ-ի կողմից ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտե ներկայացված տեղեկանք-հաշվետվության համաձայն՝ փոխանցված 23,065.2 հազ. դրամի հարկային պարտավորությունների մարման գումարից վճարվել է ընդամենը 3,298.8 հազ. դրամ, իսկ 19,766.4 հազ. դրամն որպես ազատ մնացորդ նախատեսվել է ուղղել 2021 թվականի հարկային պարտավորությունների մարմանը: Սուբսիդիայի տվյալ չափաբաժնի տրամադրման հիմք հանդիսացող՝ ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված հանձնաժողովի 22.12.2020 թվականի թիվ 21 արձանագրության համաձայն՝ «Տավուշ» ԶՕԸ-ի հարկային պարտավորության մասով կրեդիտորական պարտքը կազմել է 23,065.2 հազ. դրամ, այն դեպքում, երբ ըստ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի՝ 22.12.2020 թվականի դրությամբ «Տավուշ» ԶՕԸ-ի հարկային պարտավորությունները կազմել են ընդամենը 2,082.4 հազ. դրամ, կամ 20,982.8 հազ. դրամ սուբսիդիայի տրամադրումը չի հիմնավորվել:

5. Թվով 15 ԶՕԸ-երին տրամադրված սուբսիդիայի գումարից գարնան նախապատրաստական աշխատանքների համար հատկացվել է 705,663.09 հազ. դրամ, որից նյութերի ձեռք բերման համար՝ 106,385.07 հազ. դրամ, իսկ նորոգման աշխատանքների համար՝ 124,092.06 հազ. դրամ: Միայն նյութերի և պոմպակայանների վերանորոգման աշխատանքների գծով ծախսերի վերլուծությամբ պարզվել է, որ թվով 5 ԶՕԸ-երում գարնան նախապատրաստական նորոգման աշխատանքներ՝ ըստ ներկայացված հաշվետվությունների, չեն կատարվել, իսկ երկու՝ «Շիրակ» և «Եղեգնաձոր» ԶՕԸ-երի կողմից ներկայացված նյութածախսի փաստաթղթերում ներառվել են նաև այլ ծախսեր՝ կապված պոմպերի վերանորոգման-կարգաբերման, բեռնափոխադրման և այլ ծառայությունների ձեռք բերման հետ: Ընտրանքային կարգով գարնան նախապատրաստական աշխատանքների մասով «Կոտայք», «Շիրակ», «Թալին» և «Արտաշատ» ԶՕԸ-երի կողմից ներկայացված ֆինանսական փաստաթղթերի սուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը՝

- «Կոտայք» ԶՕԸ-ի կողմից ներկայացվել է հաշվետվություն 47,721.1 հազ. դրամի նյութերի ձեռք բերման վերաբերյալ, սակայն ներկայացված հաշվետվությամբ փաստացի նյութածախսը կազմել է 32,864.16 հազ. դրամ, իսկ մնացած 14,857.23 հազ. դրամը ծախսվել է այլ ծառայությունների ձեռք բերման համար (բեռնափոխադրում, էլեկտրականության համար ավտոմատ համակարգեր):

«Կոտայք» ԶՕԸ-ի կողմից ներկայացված 32,864.16 հազ. դրամի նյութածախսերում 21,086.0 հազ. դրամը կազմել են 3146.5 մետր երկարությամբ տարբեր տրամագծերի մետաղական խողովակները, սակայն տրամադրված կատարողական փաստաթղթերում ոռոգման փակ ցանցերի նորոգման համար ծախսվել է ընդամենը

260 մետր խողովակ, իսկ մնացած 2866,5 մետր մետաղական խողովակների օգտագործման վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացվել:

- «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից ներկայացվել է հաշվետվություն 12,226.32 հազ. դրամի նյութերի ձեռք բերման վերաբերյալ, սակայն ներկայացված ֆինանսական փաստաթղթերում առկա տվյալների հաշվարկից ելնելով՝ փաստացի նյութածախսը կազմել է 7,898.00 հազ. դրամ, իսկ մնացած 4,328.32 հազ. դրամը ծախսվել է պոմպակայանների նորոգման կամ այլ ծառայությունների ձեռք բերման համար, այն դեպքում, երբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացված հաշվետվության մեջ պոմպակայանների նորոգման ծախսեր չեն նախատեսվել:

6. Չի ապահովվել ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Ռազմավարության 11-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն որի դրամաշնորհային պայմանագրի երկարաձգման հնարավորությունից կկարողանան օգտվել այն ՋՕԸ-երը, որոնք կապահովեն պայմանագրով նախատեսված նախապայմանների կատարումը, իսկ 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհները տրամադրվելու են որոշակի պայմաններին բավարարելու պարագայում, հակառակ դեպքում՝ ՋՕԸ-ն կամ դադարում է հավակնել աջակցությանը, կամ դրամաշնորհների չափերը ճշտգրտվում են՝ հաշվի առնելով նույն կետի 2-րդ ենթակետի պայմանները, որոնց չափերն ընթացիկ տարվա համար սահմանվում են ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի առաջարկությամբ՝ ՀՀ կառավարության կողմից, ելնելով նախորդ ժամանակահատվածի համար ՋՕԸ-ի հիմնական ցուցանիշների դինամիկայից: Միաժամանակ, 12-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել են դրամաշնորհների տրամադրման հիմնական պայմանները, մասնավորապես՝ կրեդիտորական պարտավորությունները, որոնք սկսած 2019 թվականից չեն կարող գերազանցել տվյալ տարվա հաշվեգրված ծախսերի 8 % սահմանը:

Իրականում, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև 2020 թվականին կնքած սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում չեն սահմանվել Ռազմավարությամբ ամրագրված վերը նշված պայմանները, նախապայմանները և մեխանիզմները: Արդյունքում, 2020 թվականին կրեդիտորական պարտավորությունների 8 % սահմանը պահպանվել է միայն 5 ՋՕԸ-երի կողմից, իսկ ՋՕԸ-երի ընդամենը կրեդիտորական պարտքերը 2020 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, ավելացել են 690,797.0 հազ. դրամով:

VI ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի կողմից ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության արդյունավետության բարձրացման նպատակով չեն մշակվել վերջնական արդյունքի գնահատմանն անհրաժեշտ ֆինանսական կայունության չափանիշներ, ինչպես նաև չեն ընդունվել ֆինանսական աջակցության գումարների բաշխման մեթոդաբանություն և մեխանիզմներ:

2. ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի կողմից պատշաճ ուշադրություն չի հատկացվել «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման մասով ԶՕԸ-երի կողմից հաստատված ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն ֆինանսական աջակցության չափի որոշմանը, որի արդյունքում ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշմամբ հատկացվել է իրական ճեղքվածքի մեծությունը 142,046.4 հազ. դրամով գերազանցող գումար:

3. ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեն չի ապահովել 12001 միջոցառման համար ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2020 թվականին նախատեսված 2,856,008.00 հազ. դրամի ծախսերի մակարդակը՝ հանգեցնելով նախատեսված սուբսիդիայի գումարների 4,595,808.50 հազ. դրամով գերազանցմանը:

4. Պատշաճ հսկողություն չի իրականացվել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմանը համապատասխան 11002 միջոցառման շրջանակում հատկացված սուբսիդիայի գումարների նպատակային օգտագործման նկատմամբ, որի արդյունքում ԶՕԸ-ի կողմից ձեռք են բերվել կապիտալ ակտիվներ:

5. Միջոցներ չեն ձեռնարկվել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետի պահանջին համապատասխան ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև կնքված՝ արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ դրույթները պայմանագրերում ներառելու ուղղությամբ:

6. ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտեն հետևողականություն չի ցուցաբերել ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի թիվ 1678-Ն որոշման պահանջներին համապատասխան ԶՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհրդի կողմից իրեն վերապահված՝ ԶՕԸ-ին տրամադրվող ֆինանսական աջակցության

չափաքանակն ու դրանց օգտագործման արդյունավետությունը քննարկելու վերաբերյալ գործառույթների կատարումն ապահովելու գործում:

7. 2020 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, վատթարացել են Ռազմավարությամբ սահմանված հիմնական տեխնիկաֆինանսական ցուցանիշները՝ նվազել են ոռոգվող հողատարածքները և ԶՕԸ-երի եկամուտները, ավելացել ջրառը, էլեկտրական էներգիայի սպառումը, ծախսերը, էականորեն ավելացել է պետական ընթացիկ ֆինանսական աջակցության ծավալը, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերը:

VII ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին

1. Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման միջոցառման շրջանակում ՋՕԸ-երի հետ պայմանագրերում ներառել Ռազմավարությամբ սահմանված պայմանները, նախապայմանները և գործուն մեխանիզմները, մշակել և ընդունել ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության չափաքանակների մեծության սահմանման և փոփոխման մեթոդաբանություն:

2. «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար սուբսիդիայի գումարները որոշելիս պահպանել ՋՕԸ-երի կողմից հաստատված ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն ֆինանսական աջակցության չափի որոշման պահանջը:

3. Հստակ միջոցառումներ մշակել ֆինանսական աջակցության նպատակով հատկացվող գումարները ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված ծախսերի մակարդակին համապատասխանեցնելու ուղղությամբ:

4. Ուժեղացնել հսկողությունը ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ սահմանված՝ 11002 միջոցառման շրջանակում հատկացված սուբսիդիայի գումարների նպատակային օգտագործման նկատմամբ:

5. Սուբսիդիայի տրամադրման պայմանագրերը կնքելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2003 թվականի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների տրամադրման կարգի պահանջներով, պայմանագրերում սահմանել նվազագույն շահավետ գնին ու ջրի չափաքանակների փոփոխման պայմաններին, ինչպես նաև պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ դրույթներ:

6. Ապահովել ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի թիվ 1678-Ն որոշման պահանջների կատարումը և ՋՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհրդի կողմից իրեն վերապահված՝ ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակն ու դրանց օգտագործման արդյունավետությունը քննարկելու վերաբերյալ գործառույթների իրականացումը:

7. Հետևել Ռազմավարությամբ սահմանված հիմնական տեխնիկաֆինանսական ցուցանիշների կատարման ընթացքին՝ պետական ընթացիկ ֆինանսական աջակցության չափերի որոշման ընթացքում հաշվի առնելով դրանց մակարդակն ու դինամիկան:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր տեղեկատվություն (պարզաբանումներ), առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):

ՀՀ Հաշվեքննիչ պալատի 10.02.2021թ. թիվ 19-Ա որոշմամբ հաստատված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ուղարկված հաշվեքննության արձանագրության վերաբերյալ ներկայացված Ջրային կոմիտեի գրավոր տեղեկատվությունը.

1. Արձանագրության 8-րդ էջի 1004 <<Ոռոգման համակարգի առողջացում>> ծրագիր <<12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը>> միջոցառման կատարման վերաբերյալ տեղեկացնում եմ, որ <<Տավուշ>> ՋՕԸ-ին հարկային պարտավորությունների համար 22.12.2020թ. N 21 արձանագրության համաձայն տրամադրվել 23065.2 հազար դրամ գումար, որի հիմնավորումներն առկա են: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ գումարը տրվել է բյուջետային տարվա ավարտին, որի պատճառով «Տավուշ» ՋՕԸ-ն տրամադրված սուբսիդիայի գումարը փոխանցել է հաջորդ տարվա հունվար ամսին և հաշվետվություն է ներկայացել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 1 ասվա ժամկետում: Տեղեկացնում եմ նաև, որ միևնույն ժամանակ 2021 թվականի ֆինանսական հոսքերում գումարի մնացորդն առ 01.01.2021թ. դրությամբ ձևակերպել է եկամտային մասում և այն մասնակցություն է ունեցել եկամուտների և ծախսերի տարբերության չափով առաջացած ճեղքվածքի չափի մեջ՝ նվազեցնելով 2021 թվականին տրամադրվող ճեղքվածքի չափից (կցվում է):

2. Արձանագրության 8-րդ էջում նշված 1004 <<Ոռոգման համակարգի առողջացում>> ծրագիր <<12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը>> միջոցառման կատարման ՀՀ կառավարության 22.12.2020թ. N 2127-Ն որոշման մեջ և հավելվածներում տարբեր ծրագրեր ներառելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Ջրային կոմիտեն իր 17.12.2020թ. N 01/06/4832-2020 գրությամբ ՀՀ կառավարության որոշման նախագիծը շրջանառել է՝ առաջարկելով նախատեսված սուբսիդիայի գումարը տրամադրել <<11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում>> միջոցառման շրջանակում: Սակայն հաշվի առնելով, որ գումարի տրամադրումը, ըստ էության, մարում է կրեդիտորական պարտավորությունները՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Նախարարական կոմիտեի նիստում առաջարկվում է գումարը տրամադրել <<12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը>> միջոցառմամբ: Հաշվի առնելով սեղմ ժամկետները, կարծում ենք, որ ՀՀ կառավարության որոշման հրապարակման գործընթացում վերը նշվածը

տեխնիկական վրիպակ է և դրա հետագա ընթացքի վերաբերյալ Ջրային կոմիտեն չունի այլ տեղեկատվություն:

3. Արձանագրության 15-րդ էջում նշված <<11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում>> միջոցառման 2020թ. թվով 4 ԶՕԸ-երի կողմից իրականացրած գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկացնում են, որ Ջրային կոմիտեն իր համապատասխան գրությամբ ԶՕԸ-երից խնդրել է ներկայացրել համապատասխան տեղեկատվություն, սակայն ԶՕԸ-երը ներկայացրել են միայն հիմնավորող փաստաթղթերը և դեռևս չեն պատասխանել Արձանագրությամբ նշված հարցադրումներին: Տեղեկացնում են, որ Ջրային կոմիտեն ստանալուն պես այն կներկայացնի:

4. Արձանագրության 23-րդ էջում նշված «Թալին» ԶՕԸ-ի գարնան նախապատրաստական աշխատանքների մասով տեղեկացնում են, որ Ջրային կոմիտեի գարնան նախապատրաստական աշխատանքներն ուսումնասիրող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Թալին» ԶՕԸ-ի նախորդ տարիների կատարված աշխատանքները: 2019 թվականի համար նախատեսվել է 21321.0 հազար դրամ գումար, որի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունն առվահան աշխատանքները ձեռք է բերում այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու միջոցով՝ ծախսելով շատ ավելի մեծ գումարներ: Նախնական թերությունների ակտը ներկայացնելիս Ընկերությունը նշել է, որ իր կողմից կատարված աշխատանքներում գերակշիռ են առվահան աշխատանքների ծավալը: Հանձնաժողովը ուսումնասիրել է վերը բարձրացված հարցը և Ընկերությունից խնդրել է ներկայացնել մեքենամեխանիզմների ձեռքբերմամբ ծախսերի և թերությունների ակտերի վերաբերյալ տեղեկություն: Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է, որ մեքենամեխանիզմների ձեռքբերմամբ աշխատանքները կիրականացվեն ավելի քիչ ծախսերով և առաջարկել ընկերությանը գարնան նախապատրաստական աշխատանքներում առվահանման աշխատանքների ծառայության փոխարեն դիտարկել մեքենամեխանիզմների ձեռքբերումը: 2020 թվականին մեքենամեխանիզմներով իրականացված աշխատանքների համար փաստացի ծախսը կազմել են 2170.0 հազար դրամ: Միաժամանակ տեղեկացնում են, որ Ջրային կոմիտեն մեքենամեխանիզմների ձեռքբերումը դիտարկել է, որպես գարնան նախապատրաստական աշխատանքների համար կատարվող ծախսերը ֆինանսական հոսքերում որպես «ծախսերը զսպող» քաղաքականության տեսանկյունից և այն որպես հիմնավորող փաստաթուղթ կցվել է: 2021 թվականի համար ևս գարնան նախապատրաստական աշխատանքների ծախսերի արդյունավետության գնահատման չափանիշ դիտարկելով

անհրաժեշտ է նշել, որ 2021 թվականի համար գարնան նախապատրաստական աշխատանքների մեջ մեքենամեխանիզմներով կատարվելիք աշխատանքները նախատեսվել է 2337.0 հազար դրամ գումար: Միաժամանակ տեղեկացնում են, որ Զրային կոմիտեն հարցը քննարկել է նաև «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» միջոցառմամբ գումարներ տրամադրելու տարբերակով: Սակայն հաշվի առնելով, որ վերը նշված աշխատանքների համար կարևոր է ոռոգման սեզոնայնությունը, ինչպես նաև կատարվող աշխատանքների համար սեղմ ժամկետները, գնահատել է, որ իրականում տվյալ տարում հնարավոր չէր լինի այդ աշխատանքները իրականացնել վերը նշված միջոցառումների՝ այն է. ՀՀ կառավարության որոշման նախագծի շրջանառում, գումարների տրամադրում, մրցույթի կազմակերպում, աշխատանքների իրականացում և ոռոգման կազմակերպում:

Թերությունների նախնական ակտերով ներկայացված ծախսերը համադրելով ընկերությանը տրամադրած սուբսիդիայի գումարի հետ ակնհայտ է, որ Զրային կոմիտեն՝ որպես սուբսիդիայի հաշվարկման հիմքում դրված ծախսերի կազմը սահմանող և համապատասխան ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող պետական կառավարման մարմին գործել է ՀՀ կառավարության 24.12.2003թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման դրույթներին համապատասխան:

5. Արձանագրությամբ Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության և ոռոգման համակարգի առողջացման միջոցառումների մասով հաշվեքննության ընթացքում արձանագրությամբ վեր հանված դիտողությունները ընդունվել են Զրային կոմիտեի կողմից և հարցերը քննարկվել են ս/թ ապրիլ ամսի կանոնակարգող խորհրդի հերթական նիստում: Բարձրացվել են մասնավորապես հետևալ հարցերը՝

- **Ջրագտագործողների ընկերություններում աուդիտի համար ծառայությունների ձեռքբերում և պլանավորում.**

ԶՕԸ-երի կողմից ներկայացված ֆինանսական հոսքերի՝ եկամուտների ու ծախսերի կանխատեսումների հիման վրա, ֆինանսական ճեղքվածի չափի, դրանց փոփոխության, հիմնավորվածության ու արժանահավատության, ինչպես նաև ինքնավերահսկման ապահովման նպատակով ԶՕԸ-երում իրականացնել առանձին ուսումնասիրության և անկախ աուդիտի: Առաջարկվել է որպես օրակարգային հարց քննարկել նաև ԶՕԸ-երում աուդիտ կազմակերպելու

հարցը և Կանոնակարգող խորհրդի գործադիր մարմին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել աուդիտ իրականացնելու ուղղությամբ:

- Զրոգտագործողների ընկերությունների դեբիտորական պարտքերի և հավաքագրման մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվող քայլեր.

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի **N 1373-Ն** որոշման համաձայն՝ տվյալ հարկային տարվա ավարտին տվյալ հաշվետու տարում առաջացած և չմարված (չվճարված) կետանցված դեբիտորական պարտքերը ճանաչվում են անհուսալի, եթե ջրոգտագործող հարկ վճարողների կողմից մինչև հաշվետու (հարկային) տարվա ավարտը, բայց ոչ ուշ՝ մինչև դեկտեմբերի 1-ը, կետանցված դեբիտորական պարտքեր ունեցող ֆիզիկական անձանց ցուցակը փակցվել է համապատասխան գյուղապետարանի՝ հանրության համար տեսանելի տեղում, որի վերաբերյալ այդ գյուղապետի հետ համատեղ կազմված ակտի մեկ օրինակը գտնվում է ջրոգտագործող հարկ վճարողների մոտ և առնվազն երկու անգամ՝ նոյեմբերի առաջին տասնօրյակում և դեկտեմբերի առաջին տասնօրյակում, կետանցված դեբիտորական պարտք ունեցող ֆիզիկական անձանց հանձնվել են գրավոր ծանուցագրեր, որոնց երկրորդ կեսը (կտրոնը) ֆիզիկական անձի կողմից՝ այն ստանալու վերաբերյալ նշմամբ և ստորագրությամբ, գտնվում է ջրոգտագործող հարկ վճարողների մոտ: Հաշվի առնելով, որ շահութահարկ վճարող ջրոգտագործողների կողմից ֆիզիկական անձանց ոռոգման ջուր մատակարարվում է նաև քաղաքային համայնքներում և բացի այդ, որոշ դեպքերում ջրոգտագործող հարկ վճարողների կողմից ֆիզիկական անձանց գրավոր ծանուցագրերի հանձնման գործընթացը հնարավոր չի լինում իրականացնել՝ կապված ծանուցագրերի հանձնման ժամանակահատվածում ֆիզիկական անձանց բացակայության, ինչպես նաև ջրոգտագործող հարկ վճարողների համապատասխան ռեսուրսների բացակայության հետ Զրային կոմիտեն շրջանառության մեջ է դրել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության 22.12.2020թ. 1952-Ն որոշմամբ:

Տեղեկացնում եմ, նաև, որ վերը նշված գործընթացը <<Հայփոստ>> միջոցով իրականացնելու համար պահանջում էր նաև զգալի ֆինանսական ռեսուրսներ: Միաժամանակ հարկ է նշել, որ ջրոգտագործող հարկ վճարողների գործունեությունը կրում է սեզոնային բնույթ և ոռոգման ջրի մատակարարմամբ զբաղվող աշխատակիցները հիմնականում ընդունվում են աշխատանքի ոռոգման սեզոնի ընթացքում և ծանուցագրերի ներկայացման ժամանակահատվածում ջրոգտագործող հարկ վճարողների մոտ հիմնականում աշխատում են միայն վարչական մասի աշխատակիցները, որոնց ռեսուրսները չեն բավականացնում ծանուցագրերի ներկայացման գործընթացը կազմակերպելու համար:

ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանվել է, որ կետանցված դեբիտորական պարտքերը ճանաչվում են անհուսալի՝ շահութահարկ վճարող ջրօգտագործողների կողմից կետանցված դեբիտորական պարտք ունեցող ֆիզիկական անձանց ցուցակները կամ ցուցակների հրապարակման ինտերնետային կայքի հղումը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում կամ էլեկտրոնային փոստի հասցեին համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

ՀՀ կառավարության 1144-Ն որոշմամբ սահմանված է միջոցառում, համաձայն որի անհրաժեշտ է առաջարկել անցած տարիների ընթացքում կուտակված դեբիտորական պարտքերի դուրսգրման և/կամ ներման մեխանիզմների վերաբերյալ առաջարկ:

Կանոնակարգող խորհրդը Ջրային կոմիտեին առաջարկել է ներկայացնել առաջարկություն և ճանապարհային քարտեզ՝ դեբիտորական պարտքերի դուրս գրման կամ զիջման վերաբերյալ:

Ընթացիկ բյուջետային դրամաշնորհների տրամադրման սկզբունքների վերաբերյալ.

2016 թվականի օգոստոսի 25-ի <<Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին>> N 33 արձանագրության 11-րդ կետի՝ ջրօգտագործող ընկերություններին դրամաշնորհներ տրամադրվում են Ջրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերի համաձայն:

Դրամաշնորհային պայմանագրերը կնքվում են երեք տարի ժամկետով, դրանք յուրաքանչյուր տարի վերանայելու պայմանով և անհրաժեշտության դեպքում դադարեցնելու կամ ևս երկու տարով երկարաձգելու հնարավորությամբ, որոնցով ամրագրվելու են պայմանագրային երեք տարիների ընթացքում ԶՕԸ-երին տրամադրվելիք դրամաշնորհների չափերը, ինչպես նաև հաջորդ երկու տարիների դրամաշնորհների կողմնորոշիչ մակարդակներն՝ ըստ տարիների: Ընդ որում դրամաշնորհների պայմանագրերի երկարաձգման հնարավորությունից կկարողանան օգտվել այն ԶՕԸ-երը, որոնք դրամաշնորհային պայմանագրի գործողության ընթացքում կապահովեն պայմանագրով նախատեսված նախապայմանների կատարումը:

Նկատի ունենալով, որ նախատեսված դրույթները միմիանց հետ փոխկապակցված են և մեկ պայմանի չկատարումը բերում է մյուս ցուցանիշների չկատարմանը և խախտմանը (օրինակ վճարը մնացել է անփոփոխ 11 դրամ), այդ իսկ պատճառով ռազմավարությամբ սահմանված

նախապայմանները պայմանագրի մեջ չեն ներառվում: Բացի այդ ռազմավարության դրույթները գործելու են մինչև 2022 թվականը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերջին շրջանում պետական բյուջեի շրջանակներում <<Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում>> ծրագրով բյուջետային դասակարգմամբ հատկացվում է սուբսիդիա, ուստի Զրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև կնքվում են սուբսիդիայի պայմանագրեր հատկացվող գումարների շրջանակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Զրային կոմիտեի կողմից անդրադարձ է կատարվել ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքներին, որի հիման վրա կատարվել են համապատասխան ճշգրտումներ:

Առդիր՝ 1 էլեկտրոնային կրիչ:

X

Հարգանքներով՝

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ